*Հաստատված է*
*«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ տնօրենների խորհրդի*
*«27» մայիս 2025 թվականի թիվ 250527 որոշմամբ*

# ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ ԲԲԸ
## «30» հունիս 2025 թ. բաժնետերերի հերթական (տարեկան) ընդհանուր ժողովի (այսուհետ՝ Ժողով)

## <u>ՔՎԵԱԹԵՐԹԻԿ</u>

*<u>Ժողովի անցկացման ձևը</u>՝ հեռակա կարգով քվեարկությամբ:*

*<u>Հեռակա կարգով քվեարկության միջոցով անցկացվող Ժողովի ամսաթիվը</u>՝ «30» հունիս 2025 թ.,*

*<u>Լրացված քվեաթերթիկը Ընկերության կողմից ընդունելու վերջնաժամկետը</u>՝ «30» հունիս 2025 թ., ժամը 24:00,*

*<u>Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվել է «27» մայիս 2025 թվականին:</u>*

Լրացված և ստորագրված քվեաթերթիկները կարող են ներկայացվել Ընկերության գտնվելու վայրի հասցեին ուղարկելու կամ corporate@telecomarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին տեսաներածված (scan) եղանակով ուղարկելու միջոցով:

| Օրակարգի հարցերը/դրանցով կայացվող որոշումները | | Քվեարկության տարբերակները | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հաստատել Ընկերության 2024 թվականի տարեկան հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվությունը, | կողմ | | դեմ | | ձեռնպահ | |
| 2. | • Ընկերության 2024 թվականի գործունեության արդյունքներով ձևավորված զուտ շահույթից, ինչպես նաև նախորդ տարիներից կուտակված շահույթից Ընկերության "Բ" դասի բաժնետոմսերի սեփականատիրոջը վճարել 6,000,000,000 (վեց միլիարդ) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ, բացառապես Ընկերության հանդեպ "Բ" դասի բաժնետոմսերի սեփականատիրոջ ունեցած պարտքի հաշվանցման եղանակով մարման նպատակով:<br>• "Ա" դասի բաժնետոմսերով շահույթի բաշխում չիրականացնել | կողմ | | դեմ | | ձեռնպահ | |
| 3. | Հաստատել Ընկերության կանոնադրությունը նոր խմբագրությամբ: | կողմ | | դեմ | | ձեռնպահ | |
| 4. | Հաստատել Ընկերության տնօրենների խորհրդի գործունեության կանոնակարգը նոր խմբագրությամբ | կողմ | | դեմ | | ձեռնպահ | |

*<u>Բաժնետիրոջ/Անվանատիրոջ կամ Բաժնետիրոջ ներկայացուցչի ստորագրությունը</u>՝*

____________________________

անուն ազգանուն / անվանում                    ստորագրություն

*<u>Պարզաբանումներ քվեաթերթիկի լրացման կարգի վերաբերյալ</u>՝*

Քվեարկության տարբերակի ընտրությունը կատարվում է «X» կամ «✓» նշագրումով «կողմ», «դեմ», «ձեռնպահ» տարբերակների դիմաց: Անվանատիրոջ կողմից քվեարկության դեպքում «կողմ», «դեմ», «ձեռնպահ» տարբերակների ներքևում նշում է կատարվում տարբերակների օգտին քվեարկած՝ անվանատիրոջ կողմից ներկայացվող բաժնետերերին պատկանող ձայների քանակի վերաբերյալ: Նման նշման բացակայության դեպքում անվանատիրոջ կողմից քվեարկած տարբերակի օգտին քվեարկած են համարվում անվանատիրոջ կողմից ներկայացվող բոլոր բաժնետերերը:

Ձայները հաշվարկվում են այն հարցերի վերաբերյալ, որտեղ քվեարկողի կողմից թողնված է քվեարկության միայն մեկ տարբերակ (բացառությամբ անվանատիրոջ կողմից քվեարկության): Նշված պահանջի խախտմամբ լրացված քվեաթերթիկները համարվում են անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում: Նշված պահանջի խախտումը մեկ կամ մի քանի հարցի նկատմամբ չի բերում ամբողջ քվեաթերթիկի անվավեր ճանաչմանը: Քվեաթերթիկը պետք է լրացվի և ստորագրվի քվեարկող բաժնետոմսերի սեփականատիրոջ (անվանատիրոջ) կամ բաժնետիրոջ լիազոր ներկայացուցչի կողմից: Լիազոր ներկայացուցչի կողմից ստորագրության դեպքում լրացված և ստորագրված քվեաթերթիկին կցվում է նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխան կազմված և պատշաճ տրված լիազորագիրը: